




ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՆ - ԻՆՏԵՐՆԱԿԱՆ  
ՄԱՍՈՒԿԱԿԱՆ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԱՍՊԵՐԱՏՈՒՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՆ  
ՄԱՍՈՒԿԱԿԱՆ  
ԳՆԱՀԱՆՈՒՄԻ

ISSN 1829-0280

# ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



**ВЕСТНИК**

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО  
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

**MESSENGER**


OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2022 [2]


ԵՐԵՎԱՆ



**ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱՆ**

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու  
 <https://orcid.org/0000-0003-3395-2473>

**ԱԼԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ**

ՀՊՏՀ «Մակրոտնտեսական վերլուծություն»  
կրթական ծրագրի մագիստրանտ  
 <https://orcid.org/0000-0002-5416-7565>

**ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ  
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ  
ՎՐԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Եկամուտների անհավասարությունը բնութագրական է բոլոր տնտեսական համակարգերին: Եկամուտների վերաբաշխման շուկայական մեխանիզմը և նույնիսկ դրանց կենտրոնացված կարգավորումը չեն կարող վերացնել այդ անհավասարությունը, որովհետև եկամուտների հավասար բաշխումը ոչ միայն սոցիալական արդարության չի հանգեցնում, այլև թուլացնում է աշխատանքի խթաններն ու բարձր արտադրողականություն ապահովելու շահագրգռվածությունը: Դեռ ավելին՝ ընդունակությունների տարբերությունները, կրթությունն ու ուսուցումը, մասնագիտական ճաշակը և դիսկը, սեփականության տիրապետումը հասարակության եկամուտների անհավասարության առաջացման էական գործոններ են: Հոդվածում կատարվել է վերլուծություն՝ պարզելու համար եկամուտների անհավասարության հաղթահարման ուղղությամբ հարկաբյուջեի քաղաքականության ազդեցությունը: Այդ նպատակով նախ

մեկնաբանվել են փարբեր փնտրեսագետների կողմից այդ թեմայով կատարված հետազոտությունները, այնուհետև ուսումնասիրվել են ՀՀ-ում եկամուտների անհավասարության առկա վիճակը, հարկաբյուջեային քաղաքականության փոփոխությունները վերջին տասնամյակի ընթացքում: Մշակվել է մոդել հարկաբյուջեային քաղաքականության ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա գնահատելու համար, կանխատեսվել են հարկաբյուջեային քաղաքականության առանձին գործիքների ապագա շարժընթացը, դրանց ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա հաջորդ հինգ փարիների ընթացքում:

**Հիմնաբառեր.** *եկամուտների անհավասարություն, աղքատություն, հարկեր, բյուջե, հարկաբյուջեային քաղաքականություն*

JEL: P46, O23

DOI: 10.52174/1829-0280\_2022.2-9

**Ներածություն:** Համաշխարհային տնտեսության արագ զարգացմանը և երկրների՝ համաշխարհային տնտեսությանն ինտեգրման ընդլայնմանը զուգահեռ, երկրների միջև մեծանում է մրցակցությունը: Մրցակցությունը տարածվում է ինչպես մասնավոր հատվածում գործունեություն ծավալող ընկերությունների, այնպես էլ երկրների կառավարությունների միջև: Վերջիններս միմյանց հետ մրցում են տնտեսության զարգացման աստիճանով, համաշխարհային տնտեսությունում ունեցած մասնաբաժնի չափով, պետական կառավարման արդյունավետությամբ և այլ տեսանկյուններով: Այսպիսի մրցակցության համապատկերում պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունն ունի կարևոր նշանակություն: Այդ առումով շատ կարևոր է պետության կողմից հարկաբյուջեային և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետ և նպատակաուղղված իրականացումը: Հայաստանը նույնպես զերծ չէ համաշխարհային տնտեսությունում ընթացող նմանատիպ երևույթներից: Չնայած հարկաբյուջեային քաղաքականությունն ազդում է տնտեսության մի շարք հատվածների վրա՝ հողվածում նպատակ է դրվել գնահատելու ՀՀ-ում Կառավարության կողմից իրականացված հարկաբյուջեային քաղաքականության ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա: Եկամուտների անհավասարության խնդիրը մշտապես եղել է տնտեսագիտության և հասարակական մյուս գիտությունների ուշադրության կենտրոնում: Ներկայումս էլ ավելի է մեծացել դրա կարևորությունը և արդիականությունը, քանի որ վերջին հարյուրամյակի ընթացքում սրվել է եկամուտների անհավասար բաշխվածության խնդիրը աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Իսկ վերջին տարիներին ամբողջ աշխարհում բռնկված կորոնավիրուսային համավարակն ավելի է սրել այս խնդիրները՝ հրատապ դարձնելով դրանց լուծման ուղիների բացահայտման և համապատասխան քայլերի իրականացման անհրաժեշտությունը: Անկախացումից ի վեր եկամուտների անհավասարության և աղքատության խնդիրները մշտապես արդիական են եղել նաև ՀՀ-ում, իսկ կորոնավիրուսային համավարակը և արցախա-ադրբեջանական պատերազմն էլ ավելի բարդացրին առկա իրավիճակը:

**Գրականության ակնարկ:** Եկամուտների անհավասարությունը հասարակայնորեն նշանակալի հիմնախնդիր է, այդ իսկ պատճառով, դրա մասշտաբների

անընդհատ ավելացմանը զուգահեռ, հասարակության ուշադրության մեծացման համապատկերում շատ հայտնի քաղաքական գործիչներ և համաշխարհային առաջնորդներ կարևորում են եկամուտների անհավասարության դեմ պայքարը՝ որպես համաշխարհային քաղաքականության առաջնային և նշանակալի խնդիրներից մեկը: Վերջին տարիներին էլ ավելի է սրվել եկամուտների անհավասարության իրավիճակը աշխարհում՝ կապված կորոնավիրուսային համավարակի և աշխարհի գրեթե բոլոր երկրների կողմից իրականացվող սահմանափակումների հետ<sup>1</sup>:

Եկամուտների անհավասարության վերացմանն ուղղված պետական քաղաքականությունների մեջ իր կարևոր դերն ունի հարկաբյուջետային քաղաքականությունը: Տնտեսագիտական շրջանակներում կան մի շարք վերլուծություններ այս թեմայի վերաբերյալ: Դրանց մի մասը վերլուծել է հարկաբյուջետային քաղաքականության ամբողջական ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա, իսկ մյուսներն ուսումնասիրել են հարկաբյուջետային քաղաքականության առանձին գործիքների ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա:

Հարկաբյուջետային քաղաքականության ամբողջական վերլուծություն են ներկայացրել տնտեսագետներ Մարտինես-Վասկեսը, Բնակա Մորենո-Դոնտոնը և Վիլյետա Վոլովիչը<sup>2</sup>: Նրանց կատարած վերլուծության մեջ ներկայացվել է մոդել, որտեղ կախյալ փոփոխական է ընտրվել Ջինիի գործակիցը, իսկ անկախ փոփոխականներ են դիտվել հարկաբյուջետային փոփոխականների և տնտեսությունը բնութագրող վեկտորները: Հարկաբյուջետային փոփոխականների վեկտորը ներառում է եկամտային հարկը, շահութահարկը, սոցիալական ապահովագրության վճարները, անուղղակի հարկերը, մաքսատուրքերը, պետական բյուջեից տարբեր ոլորտներում կատարված ծախսերը: Տնտեսությունը բնութագրող փոփոխականների վեկտորի մեջ մտնում են բնակչության աճի տեմպը, բնակչության տարիքային կառուցվածքը, գլոբալացման մակարդակը, մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն, գործազրկության, կոռուպցիայի և կրթության մակարդակները: Նմանատիպ վերլուծություն են կատարել նաև տնտեսագետներ Ջեյջուն Վուն, Էլվա Բովան, Տիդիանե Կինդան, Սոֆիա Ջանզը<sup>3</sup>: Սակայն, ի տարբերություն նախորդ վերլուծության մոդելի, նրանց մոդելում հարկաբյուջետային փոփոխականների վեկտորի փոխարեն օգտագործվել է ֆիսկալ կոնսոլիդացումը նկարագրող փոփոխականների վեկտորը: Դա ներառում է պետական ծախսերի և հարկային եկամուտների գումարի հարաբերակցությունը ՀՆԱ-ին, ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը, ուղղակի և անուղղակի հարկերից ստացված եկամուտների հարաբերակցությունը ՀՆԱ-ին, պետական բյուջեից տրամադրվող աշխատավարձերի, սոցիալական նպաստների, սուբսիդիաների և կապիտալ ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին: Տնտեսագետներ Գունաշինզը և Չանդիկան

<sup>1</sup> St' u **Gbohoui W., Lam W. R., Lledo V. D.**, The great divide: Regional inequality and fiscal policy, International Monetary Fund, 2019:

<sup>2</sup> St' u **Martinez-Vazquez J., Moreno-Dodson B., Vulovic V.**, The impact of Tax and expenditure policies on Income distribution: Evidence from a large panel of countries, International Center for Public Policy, April, 2012:

<sup>3</sup> St' u **Woo J., Bova E., Kinda T., Zhang Y.S.**, Distribution consequences of fiscal consolidation and the role of fiscal policy: What do the data say? IMF Working Paper, September, 2013:

վերլուծություն են իրականացրել՝ հաշվարկելու համար տնտեսական աճի և հարկաբյուջետային քաղաքականության գործիքների ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա<sup>4</sup>: Իրենց վերլուծության մեջ նրանք օգտագործել են ՏՀԶԿ անդամ միջին բարձր եկամուտ ունեցող երկրների վիճակագրությունը: Հարկաբյուջետային քաղաքականության գործիքները բաժանվել են երկու խմբի՝ ուղղակի և անուղղակի, հաշվարկվել է դրանց ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա: Կատարված վերլուծության արդյունքում եզրահանգվել է, որ ուղղակի հարկերի ավելացումը և դրանց միջոցով վերաբաշխողական ծախսերի իրականացումը մեծ չափով նվազեցնում են եկամուտների անհավասարությունը:

Տնտեսագետների մյուս խումբը հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա վերլուծելու համար հաշվարկում է այդ քաղաքականության առանձին գործիքների ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա: Այդպիսի վերլուծություն են իրականացրել Պիացենտինին, Մարիոն և Չիարան, ովքեր ուսումնասիրել են պետական բյուջեից կրթության ոլորտում կատարված ծախսերի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա: Իրենց վերլուծության արդյունքում նրանք պարզել են, որ ՏՀԶԿ անդամ երկրների մեծամասնությունում նախադպրոցական կրթություն ստացած երեխաներն իրենց հասակակիցներից ավելի լավ են ներկայանում: Իսկ դպրոցական կրթություն չստացած անձինք, հավանական է, որ հետագայում կամ կլինեն գործազուրկ, կամ չեն ունենա լավ վարձատրությամբ աշխատանք<sup>5</sup>: ՏՀԶԿ-ն նույնպես կատարել է վերլուծություն՝ պարզելու համար պետական բյուջեից կրթության ոլորտում կատարված ծախսերի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա, որի արդյունքները ցույց են տալիս, որ աշխատողների մասնագիտական վերապատրաստումներն օգնում են տեխնոլոգիական առաջընթացի հետևանքով աշխատանքի շուկայում առաջացած բացասական հետևանքների մեղմմանը<sup>6</sup>: Հարկաբյուջետային քաղաքականության՝ կրթության վրա ազդեցությունը գնահատող վերլուծություն է իրականացրել նաև տնտեսագետ Ռոլֆ Հոեվենը՝ հանգելով այն եզրակացության, որ կրթության ոլորտում կատարված ծախսերը այն հիմնական գործիքն են, որով պետությունը կարող է ազդել սերունդների միջև անհավասարության փոխանցման վրա<sup>7</sup>:

Պետական բյուջեից առողջապահության ոլորտում կատարված ծախսերի ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա հաշվարկի տնտեսագետներ Մաքենբախը, Յոհանը և Վիլիամը պարզել են, որ առողջապահությու-

<sup>4</sup> Տե՛ս **Gunasinghe, Chandika** et al., The impact of fiscal shocks on real GDP and income inequality: What do Australian data say?, *Journal of Policy Modeling*, 42.2, 2020, էջ 250-270:

<sup>5</sup> Տե՛ս **Piacentini, Mario and Chiara Monticone**, *Equations and Inequalities: Making Mathematics Accessible to All*. PISA. OECD Publishing. 2, rue Andre Pascal, F-75775 Paris Cedex 16, France, 2016:

<sup>6</sup> Տե՛ս Organisation for Economic Co-operation and Development (OECD). *Education at a glance 2010: OECD indicators*. Paris: OECD, 2011:

<sup>7</sup> Տե՛ս **Hoeven R.**, *Income inequality in developing countries, past and present //The Palgrave Handbook of Development Economics*, Palgrave Macmillan, Cham, 2019, էջ 335-376:

նր կարող է օգնել առողջության հետ կապված արտադրողականության կորուստները անհատական մակարդակում նվազեցնելուն<sup>8</sup>: Տնտեսագետներ Ատկինսոնը, Աբերգը և Ռոլֆը նմանատիպ վերլուծության իրականացնելու արդյունքում պարզել են, որ առողջապահական ծառայությունների տրամադրման ազդեցությունը անմիջապես չի երևում բնակչության եկամուտների վրա, սակայն մեծապես բարձրացնում է ցածր եկամուտներ ունեցողների կյանքի որակը<sup>9</sup>: Եվրոպական հանձնաժողովի զեկույցներում նշվում է, որ առողջապահական ծառայությունների որակյալ տրամադրումը մեծացնում է հարկերի և նպաստների համակարգի վերաբաշխողական ուժը գրեթե 1/3-ով<sup>10</sup>:

Շատ երկրներում կառավարությունները հարկաբյուջետային քաղաքականությունը նպատակաուղղում են տնտեսական աճի ապահովմանը՝ հույս ունենալով, որ հավելյալ արդյունքը, որն ավելանում է տարեցտարի տնտեսական աճի հետևանքով, բաժանվում է բնակչության բոլոր շերտերի միջև՝ օգնելով հաղթահարել նաև աղքատությունը: Տեսականորեն կարող է լինել այնպես, որ հավելյալ արտադրված արդյունքը բաժին հասնի միայն հարուստ խավին: Այդ դեպքում տնտեսական աճը չի նպաստի աղքատության հաղթահարմանը: Այս հարցին անդրադարձել են տնտեսագետներ Դոլարը և Քրեյը<sup>11</sup>: Իրենց հետազոտությունը կատարելով 92 երկրների 40 տարվա վիճակագրության հիման վրա՝ նրանք եզրակացրել են, որ բնակչության եկամուտների աճի հետ համամասնորեն աճում են նաև աղքատ բնակչության եկամուտները: Ավելի ուշ Դոլարը, Քլեյնբերգը և Քրեյը, իրենց հետազոտության մեջ օգտագործելով 113 երկրների վիճակագրությունը, կրկին ստացան նույն արդյունքը<sup>12</sup>: Փորձառական հետազոտություն է իրականացրել նաև տնտեսագետ Ռավալլիոնը, ով, օգտագործելով 50 զարգացող երկրների 120 տարվա վիճակագրությունը, պարզել է, որ աղքատության միջին առաձգականությունը տնտեսական աճի նկատմամբ -2.5 է, սակայն ունի մեծ շեղում<sup>13</sup>: 95 տոկոս վստահության միջակայքում առաձգականությունը տատանվում է -0.6-ից -3.5-ի սահմաններում: Սա նշանակում է՝ եթե երկիրն ունի 50 տոկոս աղքատություն ժամանակաշրջանի սկզբում և հինգ տարի շարունակ կարողանում է ապահովել երեք տոկոս տնտեսական աճ, ապա ժամանակաշրջանի վերջում երկրում աղքատության մակարդակը կլինի 34–46 տոկոսի սահմաններում:

Այս խնդրին անդրադարձել է Նոբելյան մրցանակի դափնեկիր տնտեսագետ Սայմոն Կուզնեցը: Կուզնեցը կարծում էր, որ, երկրի զարգացման և մեկ

<sup>8</sup> Տե՛ս **Mackenbach, Johan P., Willem J. Meerding and Anton E. Kunst**, Economic costs of health inequalities in the European Union. *Journal of Epidemiology & Community Health* 65.5, 2011, էջ 412-419:

<sup>9</sup> Տե՛ս **Aaberge, Rolf, Anthony B. Atkinson and Jorgen Modalsli**, On the measurement of long-run income inequality: Empirical evidence from Norway, 1875-2013, 2017:

<sup>10</sup> Տե՛ս **European Commission**, Impact of fiscal policy on income distribution, Report on Public Finances in EMU 2017:

<sup>11</sup> Տե՛ս **Dollar David and Aart Kraay**, Institutions, trade, and growth. *Journal of monetary economics* 50.1, 2003, էջ 133-162:

<sup>12</sup> Տե՛ս **Dollar David, Tatjana Kleineberg and Aart Kraay**, Growth still is good for the poor. *European Economic Review* 81, 2016, էջ 68-85:

<sup>13</sup> Տե՛ս **Ravallion Martin**, Growth, inequality and poverty: looking beyond averages. *World development* 29.11, 2001, էջ 1803-1815:

շնչին բաժին հասնող եկամտի աճին զուգահեռ, անհավասարությունը սկզբում աճում է, այնուհետև նվազում: Այս տեսությունը Կուզնեցը ներկայացրել է կորի տեսքով, որը տնտեսագիտական շրջանակներում ստացել է «Կուզնեցի կոր» անվանումը<sup>14</sup>: Կուզնեցն այս փաստը հիմնավորել է նրանով, որ զարգացման սկզբնական փուլում երկրները հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ: Այդ ժամանակահատվածում աշխատուժը հիմնականում ունի ցածր որակավորում: Կապիտալի հարուստ սեփականատերերը քաղում են աճի բոլոր օգուտները և դառնում ավելի հարուստ, մինչդեռ աղքատների եկամուտները մնում են նույնը: Հետևաբար՝ անհավասարությունը սկզբնական շրջանում մեծանում է: Դրանից հետո երկրները գյուղատնտեսությունից անցում են կատարում արդյունաբերությանը, և մարդկային կապիտալը դառնում է ավելի կարևոր: Մարդկային կապիտալի զարգացման հետ ավելանում է աշխատողների աշխատավարձի մակարդակը՝ նպաստելով բնակչության եկամուտների ավելացմանը, և մարդիկ սկսում են քաղել տնտեսական աճի օգուտները: Հետագայում Կուզնեցի տեսությունը էմպիրիկ հետազոտության ենթարկեցին տնտեսագետներ Լակները և Միլանովիչը<sup>15</sup>, ովքեր, ուսումնասիրելով 1988–2008 թթ. տարբեր երկրների վիճակագրությունը, եկան այն եզրակացության, որ սկզբնական շրջանում տնտեսական աճի հետ համամասնորեն աճում է անհավասարությունը, հետո սկսում է նվազել: Սակայն տնտեսագետները պարզեցին, որ դրանից հետո անհավասարությունը կրկին սկսում է աճել:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Հետազոտության համար որպես տեսական հիմք են ծառայել դասական և ժամանակակից տնտեսագետների՝ հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ տեսակետները և եկամուտների անհավասարության հաղթահարման ուղղությամբ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատող հետազոտությունները: Ուսումնասիրության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ օրենքները, ՀՀ Կառավարության որոշումները, ֆինանսների նախարարության, Կենտրոնական բանկի և վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված վիճակագրական տվյալները: Աշխատանքում եկամուտների անհավասարության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատելու համար իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն, որի ժամանակ օգտագործվել է փոքրագույն քառակուսիների մեթոդը: Հարկաբյուջետային քաղաքականության առանձին գործիքների ապագա շարժընթացը կանխատեսելու համար օգտագործվել է երկու մեթոդ՝ 1. սահող միջինների մեթոդը, 2. պարզագույն ռեգրեսիոն մոդելը, որում, որպես անկախ փոփոխական, ընտրվել է անվանական ՀՆԱ-ն, իսկ կանխատեսման համար որպես հիմք են ծառայել 2021–2026 թթ. Կառավարության ծրագրում առկա ՀՆԱ կանխատեսման արդյունքները:

Բնակչության եկամուտների անհավասարությունը բնութագրող ցուցանիշները՝ Ջինիի գործակիցը, դեցիլային և քվանտիլային գործակիցները, ՀՀ

<sup>14</sup> Տե՛ս **Kuznets Simon**, Economic growth and income inequality. The American economic review 45.1, 1955, էջ 1-28:

<sup>15</sup> Տե՛ս **Lakner Christoph** and **Branko Milanovic**, Global income distribution: from the fall of the Berlin Wall to the Great Recession. The World Bank Economic Review 30.2, 2016, էջ 203-232:

ՎԿ-ն հրապարակում է տարեկան կտրվածքով: Եկամուտների անհավասարության հաղթահարման ուղղությամբ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատող նշանակալի մոդել կազմելու համար առաջարկել ենք հաշվարկել *ինդեքս* ցուցանիշը, որը կբնութագրի բնակչության եկամուտների անհավասարությունը եռամսյակային կտրվածքով:

Նմանատիպ ցուցանիշ ստանալու համար նախ անհրաժեշտ է ուսումնասիրել բնակչության եկամուտների կառուցվածքը: Բնակչության եկամուտների կառուցվածքի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ Ա՝ առաջին քվանտիլի, Ա՝ 5-րդ քվանտիլի բնակչության եկամուտների մեջ հիմնական եկամուտների աղբյուրները չորսն են՝ վարձու աշխատանք, պետական թոշակներ և նպաստներ, գյուղմթերքի և կենդանիների վաճառքից ստացված եկամուտներ, տրանսֆերտներ:

Բնակչության եկամուտների փոփոխությունն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է եկամտի այս չորս աղբյուրներն ուսումնասիրել: Սակայն քանի որ չկա հասանելի եռամսյակային վիճակագրություն վարձու աշխատանքից, պետական թոշակներից և նպաստներից, գյուղմթերքի և կենդանիների վաճառքից և տրանսֆերտներից ստացված եկամուտների վերաբերյալ, անհրաժեշտ է ընտրել եկամտի այս չորս աղբյուրները բնութագրող և դրանց փոխարինող այնպիսի ցուցանիշներ, որոնց վերաբերյալ եռամսյակային ցուցանիշներն առկա են, և դրանց փոփոխությունների դինամիկան վերոնշյալ եկամտի աղբյուրների փոփոխությանը համահունչ է: Եկամտի աղբյուրների և դրանց փոխարինող փոփոխականների միջև կապի ուժգնությունը պարզելու համար հաշվարկվել է դրանց միջև կոռելյացիան: Վարձու աշխատանքը բնութագրող ցուցանիշ է ընտրվել միջին ամսական անվանական աշխատավարձը, պետական թոշակները և նպաստները բնութագրող ցուցանիշ՝ պետական բյուջեից կենսաթոշակին և սոցիալական նպաստներին տրամադրվող միջոցները, գյուղմթերքի և կենդանիների վաճառքից ստացվող եկամուտները բնութագրող ցուցանիշ՝ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը, տրանսֆերտները բնութագրող ցուցանիշ՝ դեպի << փոխանցվող անձնական տրանսֆերտները:

Հաշվարկելով վերոնշյալ ցուցանիշների աճի տեմպերը և դրանք բազմապատկելով համապատասխան եկամտի աղբյուրի տվյալ տարվա կշռով՝ կստացվի համապատասխան եկամտի աղբյուրի նպաստումը բնակչության եկամուտների փոփոխությանը: Այնուհետև գումարելով բոլոր եկամտի աղբյուրների նպաստումները՝ կստացվի բնակչության եկամտի փոփոխության աճի տեմպը: Ստացված ցուցանիշների միջոցով բնակչության տարբեր խմբերի միջև եկամուտների անհավասար բաշխվածությունը հաշվարկվում է հինգերորդ քվանտիլի բնակչության և առաջին քվանտիլի բնակչության եկամուտների աճի տեմպերի հարաբերությամբ: Եթե հարաբերության արդյունքում ստացվում է 1-ից մեծ թիվ, ուրեմն հինգերորդ քվանտիլի բնակչության եկամուտներն աճել են ավելի արագ, քան առաջին քվանտիլի բնակչության եկամուտները, հետևաբար՝ եկամուտների անհավասարությունը մեծացել է: Եթե հարաբերության արդյունքում ստացվում է 0-ից 1-ն ընկած հատվածում թիվ, ուրեմն առաջին քվանտիլի բնակչության եկամուտներն աճել են ավելի արագ, քան հինգերորդ քվանտիլի բնակչության եկամուտները, հետևաբար՝ եկամուտների անհավասարությունը նվազել է:




**Վերլուծություն:** Ժամանակակից աշխարհում համաշխարհային մրցակցությանը դիմակայող տնտեսություն ստեղծելու համար անհրաժեշտ նախապայմաններից մեկը բյուջետային ռեսուրսների կառավարման այնպիսի համակարգի ձևավորումն է, որը ոչ միայն պետք է ապահովի պետական ապարատի գործառույթների անհրաժեշտ մակարդակով իրականացումը, այլ նաև երաշխավորի բյուջետային հնարավորությունների անընդհատ ընդարձակումը և դրանց արդյունավետ օգտագործումը:

ՀՀ հարկային համակարգն անցել է ձևավորման երեք փուլ՝ 1. նոր հարկային համակարգի ստեղծում (1992–1995 թթ.), 2. առանձին հարկային օրենքների ընդունում (1995–2000 թթ.), 3. այլ հարկային բարեփոխումների իրականացում (2000 թ. մինչև օրս):

Ներկայումս ՀՀ-ում գործում է երկմակարդակ հարկային համակարգ, որն ընդգրկում է ինը հարկատեսակ. յոթը՝ պետական, երկուսը՝ տեղական: Ըստ ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ տարբերվում են պետական և տեղական հետևյալ հարկատեսակները. պետական հարկերն են՝ ԱԱՀ, ակցիզային հարկ, շահութահարկ, եկամտային հարկ, բնապահպանական հարկ, ճանապարհային հարկ, շրջանառության հարկ, տեղական հարկերն են՝ անշարժ գույքի հարկ, փոխադրամիջոցների գույքահարկ<sup>16</sup>:

Հասարակության եկամուտների անհավասարության պատճառներն ու գործոնները բազմաթիվ ու բազմաբնույթ են: Հետևաբար՝ եթե հասարակության անդամներն ունենային նույնիսկ հավասար մեկնարկային պայմաններ, միևնույն է, նրանց եկամուտների անհավասարությունը չէր վերանա: Ուստի պետությունը պարտավոր է իրականացնել համապատասխան սոցիալական քաղաքականություն, որպեսզի անապահով խավերն ունենան ապրուստի նվազագույն պայմաններ: Սակայն սոցիալական ճիշտ քաղաքականություն վարելու համար պետությունը պետք է գնահատի եկամուտների անհավասարության մակարդակը: Գոյություն ունի եկամուտների անհավասարության մակարդակի հաշվարկման մի քանի մոտեցում՝ Լորենցի կոր, Ջինիի գործակից, դեցիլային գործակից, քվանտիլային գործակից:




**Գծապատկեր 1. Ջինիի գործակիցի փոփոխությունը 2004–2020 թթ.<sup>17</sup>**

<sup>16</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք (4 հոկտեմբերի 2016 թ.):

<sup>17</sup> ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2004–2020:

Գծապատկեր 1-ում ներկայացված է Ջինիի գործակիցը ՀՀ-ի համար՝ 2004–2020 թթ.: Գծապատկերից երևում է, որ թեև մինչև 2008 թվականի տնտեսական ճգնաժամը տնտեսական աճը բարձր էր, սակայն դրա միջոցով ավելացած եկամուտներն անհավասար էին բաշխվում բնակչության միջև, ուստի Ջինիի գործակիցն աճի միտում է ունեցել: Նախաճգնաժամային ժամանակահատվածում Ջինիի գործակիցը 2005 թ. 0.359-ից 2008 թվականին դարձել էր 0.389: Ճգնաժամի հետևանքով բնակչության խմբերի միջև եկամուտների անհավասարությունը նվազել է:


Բնակչության շրջանում եկամուտների անհավասար բաշխվածությունը ուսումնասիրելու համար ավելի լավ ցուցանիշ է բնակչության եկամուտների բաշխվածությունն ըստ քվանտիլային խմբերի: Գծապատկեր 2-ում ներկայացված է բնակչության եկամուտների բաշխվածությունն ըստ քվանտիլային խմբերի՝ 2004–2020 թվականներին:



**Գծապատկեր 2. Բնակչության եկամուտների բաշխվածությունն ըստ քվանտիլային խմբերի (2004–2020 թթ.)<sup>18</sup>**

Թեև ուսումնասիրվող ժամանակահատվածում Ջինիի գործակիցը էական փոփոխությունների չի ենթարկվել, սակայն, ըստ գծապատկեր 2-ի տվյալների, 5-րդ քվանտիլի բնակչության եկամուտները նվազել են՝ 48.6 տոկոսից դառնալով 42.9 տոկոս: Միևնույն ժամանակ, առաջին քվանտիլի բնակչության եկամուտներն աճել են՝ 4.6 տոկոսից դառնալով 5.6 տոկոս: Սա ցույց է տալիս, որ 2004–2020 թթ. բնակչության եկամուտների անհավասարությունը, թեև փոքր չափով, նվազել է: Անհավասարության կրճատման չափն ավելի պատկերավոր տեսնելու նպատակով գծապատկեր 3-ում ներկայացված է քվանտիլային գործակիցը 2004–2020 թթ.:

<sup>18</sup> Նույն տեղում:



Գծապատկեր 3. Քվանտիլային գործակցի փոփոխությունը 2004–2020 թթ.<sup>19</sup>

Ըստ գծապատկեր 3-ի տվյալների՝ քվանտիլային գործակիցը 2004–2006 թթ. կտրուկ նվազել է՝ 2006 թվականին հասնելով ուսումնասիրվող ժամանակահատվածի ամենացածր ցուցանիշին, իսկ 2007–2016 թվականներին աճել է: 2017–2020 թվականների ընթացքում նորից սկսել է նվազել՝ կրկին հասնելով 7.6 գործակցի:

Եկամուտների անհավասարության վրա ազդող գործոնների մեջ էական դեր ունեն հարկաբյուջետային քաղաքականության գործիքները՝ ուղղակի հարկեր, անուղղակի հարկեր և պետական ծախսեր: Գնահատելու համար, թե առանձին հարկերի և պետական ծախսերի տեսակներն ինչպես են ազդում եկամուտների անհավասարության վրա, կազմել ենք մոդել և ռեգրեսիոն վերլուծության միջոցով հաշվարկել դրանց ազդեցության չափը եկամուտների անհավասարության վրա:

Եկամուտների անհավասարության վրա առանձին հարկատեսակների և տարբեր ոլորտներում պետական ծախսերի ազդեցությունը գնահատելու համար կազմված մոդելում որպես կախյալ փոփոխական է ընտրվել մեր առաջարկած՝ բնակչության եկամուտների անհավասարությունը բնութագրող եռամսյակային ինդեքսի ցուցանիշը: Որպես անկախ փոփոխականներ ընտրվել են պետական բյուջեից կրթության և առողջապահության ոլորտներին տրամադրված ծախսերը, պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, պետական բյուջե հավաքագրված ակցիզային և եկամտային հարկերը<sup>20</sup>, զբաղվածների թիվը, երկիր մուտք գործած զբոսաշրջիկների թիվը և անվանական ՀՆԱ փոփոխությունը<sup>21</sup>: Բոլոր ցուցանիշները մոդելում ներկայացված են նախորդ ժամանակաշրջանի նկատմամբ հաշվարկված աճի տեմպերով և

<sup>19</sup> Նույն տեղում:

<sup>20</sup> Եկամուտների անհավասարության վրա բոլոր հարկատեսակների ազդեցությունը հաշվարկող մոդելի արդյունքներից պարզ է դարձել, որ նշանակալի արդյունքներ ունեն միայն պետական բյուջե հավաքագրված ակցիզային և եկամտային հարկերը:

<sup>21</sup> Տնտեսությունը բնութագրող փոփոխականների ազդեցությունը եկամուտների անհավասարության վրա հաշվարկելու համար ընտրվել են զբաղվածների թիվը, երկիր մուտք գործած զբոսաշրջիկների թիվը և անվանական ՀՆԱ-ն՝ որպես անկախ փոփոխականներ: Զբաղվածների թիվն ընտրվել է որպես անկախ փոփոխական, քանի որ բնակչության եկամուտների կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն *աշխատանք* գործոնից ստացված եկամուտները: Զբոսաշրջիկների թիվը մոդելում ընդգրկվել է որպես անկախ փոփոխական, քանի որ զբոսաշրջության աճը խթանում է ներքին պահանջարկը՝ ավելացնելով բնակչության եկամուտները, ինչպես նաև գնահատելու համար երկրում արտարժույթի ներհոսքի ազդեցությունը: ՀՆԱ-ն, որպես անկախ փոփոխական, ներառվել է մոդելում՝ պարզելու համար Կուզնեցի տեսության՝ «< տնտեսությունում «աշխատելու» հանգամանքը:

սեզոնային ճշգրտված են՝ սեզոնային տատանումները մեղմելու համար<sup>22</sup>: Մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$QF_t = QF_{t-2} + HC_t + HC_{t-10} + ET_{t-8} + GC_{t-7} + IT_{t-13} + EMPLOY_{t-20} + TOUR_t + EC_t + EC_{t-44} + GDP_{t-25} + C$$

որտեղ՝  $QF_t$ -ն բնակչության եկամուտների անհավասարությունը բնութագրող եռամսյակային ինդեքսի ցուցանիշն է t-րդ եռամսյակում,  $HC_t$ -ն՝ պետական բյուջեից կատարված առողջապահական ծախսերի աճի տեմպը t-րդ եռամսյակում,  $ET_t$ -ն՝ պետական բյուջե հավաքագրված ակցիզային հարկի ծավալների աճի տեմպը t-րդ եռամսյակում,  $GC_t$ -ն՝ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհների ծավալի աճի տեմպը t-րդ եռամսյակում,  $IT_t$ -ն՝ պետական բյուջե հավաքագրված եկամտային հարկի ծավալների աճի տեմպը t-րդ եռամսյակում,  $EMPLOY_t$ -ն՝ զբաղվածների թվի աճի տեմպը t-րդ եռամսյակում,  $TOUR_t$ -ն՝ երկիր մտած զբոսաշրջիկների թվի աճի տեմպը t-րդ եռամսյակում,  $EC_t$ -ն՝ պետական բյուջեից կատարված կրթական ծախսերի աճի տեմպը t-րդ եռամսյակում,  $GDP_t$ -ն՝ անվանական ՀՆԱ աճի տեմպը t-րդ եռամսյակում:

Եկամուտների անհավասարության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատելու համար վերոնշյալ մոդելում որպես անկախ փոփոխականներ ներկայացված են բնակչության եկամուտների անհավասարությունը բնութագրող եռամսյակային ինդեքսի ցուցանիշը 2 եռամսյակ առաջ, պետական բյուջե հավաքագրված ակցիզային հարկի ծավալները 8 եռամսյակ առաջ, պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհների ծավալը 7 եռամսյակ առաջ, պետական բյուջե հավաքագրված եկամտային հարկի ծավալները 13 եռամսյակ առաջ, զբաղվածների թիվը 20 եռամսյակ առաջ, երկիր մուտք գործած զբոսաշրջիկների թիվը, անվանական ՀՆԱ-ն 25 եռամսյակ առաջ: Պետական բյուջեից առողջապահության և կրթության ոլորտներում կատարված ծախսերի ծավալները մոդելում որպես անկախ փոփոխական ընդգրկված են երկու ժամանակային լագով, այսինքն՝ կախյալ փոփոխականի վրա ազդում են երկու ժամանակահատվածում: Առողջապահության ոլորտում կատարված ծախսերի ծավալը կախյալ փոփոխականի վրա ազդում է առաջինը՝ անմիջապես, երկրորդը՝ 10 եռամսյակ հետո: Կրթության ոլորտում կատարված ծախսերի ծավալը եկամուտների անհավասարության վրա ազդում է առաջինը՝ անմիջապես, երկրորդը՝ 44 եռամսյակ հետո: Անկախ փոփոխականների լագերի երկարություններն ընտրվել են Ակաիկեի (Akaike information criterion), Շվարցի (Schwarz information criterion), Հանան-Քյուինի (Hannan-Quinn information criterion) չափորոշիչների հաշվարկման միջոցով: Փոքրագույն քառակուսիների մեթոդով մոդելը հաշվարկելու դեպքում ստացվում են հետևյալ արդյունքները.

<sup>22</sup> Սեզոնային ճշգրտումներն իրականացվել են սահող միջինների մեթոդով (Moving Avarage):

$$\begin{aligned}
 QF_t = & 0.42 * QF_{t-2} - 0.0018 * HC_t - 0.0013 * HC_{t-10} - 0.0012 * ET_{t-8} + 0.0022 \\
 & * GC_{t-7} + 0.0021 * IT_{t-13} + 0.0087 * EMPLOY_{t-20} - 4.18 \\
 & * TOUR_t - 0.0033 * EC_t - 0.0008 * EC_{t-44} - 0.0022 * GDP_{t-25} \\
 & + 0.417
 \end{aligned}$$

Ըստ մոդելի արդյունքների՝ եկամուտների անհավասարության վրա դրական ազդեցություն են ունենում (մեծանում է եկամուտների անհավասարությունը) եկամուտների անհավասարությունը բնութագրող եռամսյակային ինդեքսի ցուցանիշը, պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, պետական բյուջե հավաքագրված եկամտային հարկի ծավալները և զբաղման ծավալը: Բացասական ազդեցություն են ունենում (նվազեցնում են եկամուտների անհավասարությունը) պետական բյուջեից առողջապահության և կրթության ոլորտներում կատարված ծախսերը, պետական բյուջե հավաքագրված ակցիզային հարկի ծավալները, երկիր մուտք գործած զբոսաշրջիկների թիվը և անվանական ՀՆԱ-ն:

Եկամուտների անհավասարության վերացման ուղղությամբ հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության մակարդակի բարձրացման ուղիները գտնելու համար ուսումնասիրենք հարկաբյուջետային քաղաքականության առանձին գործիքների ազդեցությունը, կանխատեսենք դրանց դինամիկան հաջորդ 5 տարիների համար: Կանխատեսում իրականացվել է սահող միջինների մեթոդով և պարզագույն ռեգրեսիոն մոդելով: Սահող միջինի մեթոդով հաշվարկելիս օգտագործվել են նախորդ երկու տարիների նույն եռամսյակների տվյալները: Պարզագույն ռեգրեսիոն մոդելում որպես անկախ փոփոխական ընտրվել է անվանական ՀՆԱ-ն: Կանխատեսման հիմք է հանդիսացել ՀՀ Կառավարության 2021–2026 թթ. ծրագրով նախատեսված տարեկան միջինում 7 տոկոս, իսկ բարենպաստ արտաքին տնտեսական պայմաններում՝ 9 տոկոս տնտեսական աճը<sup>23</sup>:

**Կրթություն:** Նախորդ բաժնում ներկայացված մոդելների արդյունքներից ակնհայտ է, որ կրթության ոլորտում պետական ներդրումները էական նշանակություն ունեն եկամուտների անհավասարության գործում: Պետական բյուջեից կրթության ոլորտում կատարված ծախսերի մեկ տոկոս աճը եկամուտների անհավասարությունը նախ նվազեցնում է 0.0033 տոկոսով, ապա՝ 44 եռամսյակ հետո՝ 0.0008 տոկոսով: 2020 թվականին պետական բյուջեից կրթության ոլորտում ծախսվել է 143796.3 միլիոն դրամ: Սահող միջինների մեթոդով կանխատեսման արդյունքում 2026 թվականին պետական բյուջեից կրթության ոլորտին կտրամադրվի 266910.9 միլիոն դրամ, այսինքն՝ աճը կկազմի 85 տոկոս: Այսպիսի զարգացման դեպքում կրթության ոլորտում կատարվող ծախսերը եկամուտների անհավասարությունը կնվազեցնեն 0.3485 տոկոսով:

Պարզագույն ռեգրեսիոն մոդելով կանխատեսման ժամանակ եթե ենթադրվում է, որ ՀՆԱ-ն տարեկան կաճի 7 տոկոսով, ապա 2026 թվականին պետական բյուջեից կրթության ոլորտին կհատկացվի 187698.7 միլիոն դրամ (աճը՝ 30 տոկոս): Այդ դեպքում պետական բյուջեից կրթության ոլորտում կատարվող ծախսերը եկամուտների անհավասարությունը կնվազեցնեն 0.123

<sup>23</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2021–2026 թվականների ծրագիր, N1363-Ա որոշում, 18 օգոստոսի 2021:

տոկոսով: Իսկ եթե ենթադրվում է, որ ՀՆԱ-ն կաճի տարեկան 9 տոկոսով, ապա 2026 թվականին պետական բյուջեից կրթության ոլորտին կտրամադրվի 202897.3 մլն դրամ (աճը՝ 41 տոկոս): Այդ դեպքում կրթության ոլորտում պետական ծախսերը եկամուտների անհավասարությունը կնվազեցնեն 0.1681 տոկոսով:

**Առողջապահություն:** Եկամուտների անհավասարության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատող մոդելների արդյունքները ցույց են տալիս, որ առողջապահությունը եկամուտների անհավասարության և աղքատության հաղթահարման ամենաարդյունավետ գործիքներից է: Պետական բյուջեից առողջապահության ոլորտում կատարված ծախսերի մեկ տոկոս աճը եկամուտների անհավասարությունը նախ անմիջապես նվազեցնում է 0.0018 տոկոսով, ապա՝ 10 եռամսյակ հետո՝ 0.0013 տոկոսով: 2020 թվականին պետական բյուջեից առողջապահության ոլորտում ծախսվել է 148236.8 միլիոն դրամ: Սահող միջինների մեթոդով պետական բյուջեից առողջապահության ոլորտում կատարվող ծախսերի կանխատեսման արդյունքները ցույց են տալիս, որ 2026 թվականին պետական բյուջեից առողջապահության ոլորտին կտրամադրվի 224149.8 միլիոն դրամ, այսինքն՝ 2020 թվականի ցուցանիշի համեմատությամբ աճը կկազմի 51 տոկոս: Այս պայմաններում պետական բյուջեից առողջապահության ոլորտում կատարվող ծախսերը 2026 թվականին եկամուտների անհավասարությունը կնվազեցնեն 0.1581 տոկոսով:

Պարզագույն ռեգրեսիոն մոդելով կանխատեսման արդյունքներով տարեկան 7 տոկոս տնտեսական աճի պայմաններում 2026 թվականին պետական բյուջեից կտրամադրվի 168154.7 միլիոն դրամ (աճը՝ 13.4 տոկոս): Այս դեպքում 2026 թվականին պետական բյուջեից առողջապահության ոլորտում կատարվող ծախսերը եկամուտների անհավասարությունը կնվազեցնեն 0.0415 տոկոսով, իսկ տարեկան 9 տոկոս տնտեսական աճի պայմաններում 2026 թվականին պետական բյուջեից կտրամադրվի 186168.1 միլիոն դրամ (աճը՝ 25 տոկոս): Այս պայմաններում պետական առողջապահական ծախսերը եկամուտների անհավասարությունը կնվազեցնեն 0.0775 տոկոսով:

**Դրամաշնորհներ:** Եկամուտների անհավասարության վերացման ուղղությամբ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատող մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհների ծավալի մեկ տոկոս աճը եկամուտների անհավասարությունը 7 եռամսյակ հետո ավելացնում է 0.0022 տոկոսով: 2020 թվականին պետական բյուջեից տրամադրվել է 186854.2 միլիոն դրամի դրամաշնորհ: Սահող միջինների մեթոդով պետական դրամաշնորհների դինամիկայի կանխատեսման արդյունքները ցույց են տալիս, որ 2026 թվականին պետական բյուջեից կտրամադրվի 368990.9 միլիոն դրամի դրամաշնորհ, այսինքն՝ 2020 թվականի ցուցանիշի նկատմամբ աճը կկազմի 97 տոկոս: Այդ դեպքում պետական դրամաշնորհները 2026 թվականին եկամուտների անհավասարությունը կմեծացնեն 0.2134 տոկոսով:

Պարզագույն ռեգրեսիոն մոդելով պետական դրամաշնորհների կանխատեսման արդյունքները ցույց են տալիս, որ 7 տոկոս տնտեսական աճի պայմաններում պետական դրամաշնորհները 2026 թվականին կհասնեն 226149.8 միլիոն դրամի (աճը՝ 21 տոկոս), այսինքն՝ եկամուտների անհավասարությունը

կավելացնեն 0.0462 տոկոսով: 9 տոկոս տնտեսական աճի պայմաններում 2026 թվականին եկամուտների անհավասարությունը կհասնի 249304.3 միլիոն դրամի (աճը՝ 33 տոկոս), այսինքն՝ եկամուտների անհավասարությունը կավելացնեն 0.0726 տոկոսով:

**Ակցիզային հարկ:** Եկամուտների անհավասարության վերացման ուղղությամբ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատող մոդելների արդյունքները ցույց են տալիս, որ ակցիզային հարկը վերաբաշխողական լավ ներուժ ունի: Պետական բյուջե հավաքագրվող ակցիզային հարկի ծավալների մեկ տոկոս աճը եկամուտների անհավասարությունը 8 եռամսյակ հետո նվազեցնում է 0.0012 տոկոսով: 2020 թվականին պետական բյուջե է հավաքագրվել 123555.7 միլիոն դրամ ակցիզային հարկ: Սահող միջինների մեթոդով պետական բյուջե հավաքագրվող ակցիզային հարկի ծավալների կանխատեսման արդյունքները ցույց են տալիս, որ 2026 թվականին պետական բյուջե կհավաքագրվի 139368.9 միլիոն դրամ, որը 2020 թվականի ցուցանիշից մեծ է 13 տոկոսով: Այսինքն՝ 2026 թվականի կանխատեսման արդյունքների համաձայն, պետական բյուջե հավաքագրված ակցիզային հարկի ծավալները եկամուտների անհավասարությունը կնվազեցնեն 0.0156 տոկոսով:

Պարզագույն ռեգրեսիոն մոդելի օգնությամբ կատարված կանխատեսման արդյունքները ցույց են տալիս, որ 7 տոկոս տնտեսական աճ գրանցելու դեպքում 2026 թվականին պետական բյուջե կհավաքագրվի 154856.4 միլիոն դրամ ակցիզային հարկ (աճը՝ 25 տոկոս), այսինքն՝ եկամուտների անհավասարությունը կնվազեցնի 0.03 տոկոսով: 9 տոկոս տնտեսական աճի դեպքում 2026 թվականին պետական բյուջե կհավաքագրվի 171516.1 միլիոն դրամ ակցիզային հարկ (աճը՝ 39 տոկոս), այսինքն՝ եկամուտների անհավասարությունը կնվազեցնի 0.0468 տոկոսով:

**Եկամտային հարկ:** Եկամուտների անհավասարության վերացման ուղղությամբ հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատող մոդելների արդյունքներից երևում է, որ պետական բյուջե հավաքագրվող եկամտային հարկը բացասաբար է ազդում եկամուտների անհավասարության վրա: Պետական բյուջե հավաքագրված եկամտային հարկի ծավալների մեկ տոկոս աճը եկամուտների անհավասարությունը 13 եռամսյակ հետո ավելացնում է 0.0021 տոկոսով: 2020 թվականին պետական բյուջե է հավաքագրվել 411514.5 միլիոն դրամ եկամտային հարկ: Սահող միջինների մեթոդով պետական բյուջե հավաքագրվող եկամտային հարկի ծավալների կանխատեսման արդյունքները ցույց են տալիս, որ 2026 թվականին կհավաքագրվի 500389.2 միլիոն դրամ եկամտային հարկ, որը 2020 թվականի ցուցանիշից մեծ է 21 տոկոսով, այսինքն՝ 2026 թվականին պետական բյուջե հավաքագրված եկամտային հարկի ծավալները եկամուտների անհավասարությունը կավելացնեն 0.0441 տոկոսով:

Պարզագույն ռեգրեսիոն մոդելով հավաքագրվող եկամտային հարկի ծավալների կանխատեսման արդյունքները ցույց են տալիս, որ 7 տոկոս տնտեսական աճի դեպքում 2026 թվականին կհավաքագրվի 714244.6 միլիոն դրամ եկամտային հարկ (աճը՝ 73 տոկոս), այսինքն՝ 2026 թվականին եկամուտների անհավասարությունը կավելանա 0.1533 տոկոսով: 9 տոկոս տնտեսական աճի պայմաններում 2026 թվականին կհավաքագրվի 808058.5 միլիոն դրամ

(աճը՝ 96 տոկոս), այսինքն՝ 2026 թվականին հավաքագրվող եկամտային հարկի ծավալները եկամուտների անհավասարությունը կավելացնեն 0.2016 տոկոսով:

**Եզրակացություն:** Հոդվածում կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հանգել ենք որոշակի եզրակացությունների:

Եկամուտների անհավասարության հաղթահարման գործում պետական քաղաքականության գործիքներից հարկաբյուջետային քաղաքականությունն ունի առանցքային նշանակություն: Մի շարք տնտեսագետների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ հարկաբյուջետային քաղաքականության գործիքները կարող են արդյունավետորեն լուծել այդ խնդիրը: Հարկաբյուջետային քաղաքականության գործիքներից վերաբաշխողական գործառույթ կարող են կատարել պետության կողմից իրականացվող հարկային և ծախսային քաղաքականությունները, մասնավորապես՝ կրթության, առողջապահության, ենթակառուցվածքների ոլորտներում իրականացվող պետական ծախսերը, պետական բյուջե հավաքագրվող ուղղակի և անուղղակի հարկերը:

Պետական ծախսերի մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն սոցիալական նպաստների և կենսաթոշակների վրա կատարված ծախսերը, դրան հաջորդում են աշխատավարձի և ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման գծով կատարվող ծախսերը: Եկամուտների անհավասարությունը վերջին երկու տասնամյակի ընթացքում չի կրել էական փոփոխություն: Եկամուտների անհավասարությունը բնութագրող Ջինիի գործակիցը ամենացածր ցուցանիշն արձանագրել է 2009 թվականին՝ 0,355, իսկ քվանտիլային գործակիցն իր ամենացածր ցուցանիշն արձանագրել է 2006 և 2020 թթ.՝ 7,6:

Եկամուտների անհավասարության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատող մոդելի արդյունքները ցույց են տալիս, որ եկամուտների անհավասարությունը նվազեցնում են պետական բյուջեից առողջապահության և կրթության ոլորտներում կատարված ծախսերը, պետական բյուջե հավաքագրված ակցիզային հարկի ծավալները, երկիր մուտք գործած զբոսաշրջիկների թիվը և անվանական ՀՆԱ-ն: Եկամուտների անհավասարությունը մեծացնում են պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհների ծավալը, պետական բյուջե հավաքագրված եկամտային հարկի ծավալները և զբաղվածների թիվը:

Եկամուտների անհավասարության վրա հարկաբյուջետային քաղաքականության գործիքներից ամենամեծ դրական ազդեցությունն ունեն պետական բյուջեից կրթության և առողջապահության ոլորտներում կատարված ծախսերը: Կրթության ոլորտում կատարված պետական ծախսերը դեպքերի լավագույն սցենարի դեպքում 2026 թվականին եկամուտների անհավասարությունը կնվազեցնեն 0.3485 տոկոսով, իսկ առողջապահական ծախսերը՝ 0.1581 տոկոսով:



### Օգտագործված գրականություն

1. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքը, 26 դեկտեմբերի 1997 թ.:
2. «Հարկերի մասին» ՀՀ օրենքը, 14 ապրիլի 1997 թ.:
3. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքը, 7 հուլիսի 1998 թ.:
4. «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքը, 5 հունիսի 2000 թ.:
5. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը, 4 հոկտեմբերի 2016 թ.:
6. ՀՀ Կառավարության 2021–2026 թվականների ծրագիրը, N 1363-Ս որոշում, 18 օգոստոսի 2021 թ.:
7. ՀՀ ՎԿ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018 թ.:
8. ՀՀ ՎԿ, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1993–1994 թթ.:
9. ՀՀ ՎԿ, Հայաստանի ֆինանսական վիճակագրություն, 2008–2020 թթ.:
10. ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ պետական բյուջեի կատարման վերլուծություն, 2008–2020 թթ.:
11. ՀՀ ՎԿ, Տարեգիրք, 2004–2020 թթ.:
12. Aaberge, Rolf, Anthony B. Atkinson and Jorgen Modalsli, On the measurement of long-run income inequality: Empirical evidence from Norway, 1875-2013.
13. Dollar David and Aart Kraay, Institutions, trade, and growth. *Journal of monetary economics*, 50.1, 2003.
14. Dollar David, Tatjana Kleineberg and Aart Kraay, Growth still is good for the poor. *European Economic Review*, 81, 2016.
15. European Commission, Impact of fiscal policy on income distribution, Report on Public Finances in EMU 2017.
16. Gbohoui W., Lam W. R., Lledo V. D., The great divide: Regional inequality and fiscal policy. International Monetary Fund, 2019.
17. Gunasinghe, Chandika et al., The impact of fiscal shocks on real GDP and income inequality: What do Australian data say?., *Journal of Policy Modeling*, 42.2, 2020.
18. Hoeven R., Income inequality in developing countries, past and present //The Palgrave Handbook of Development Economics, Palgrave Macmillan, Cham, 2019.
19. Kalwij, Adriaan and Frederic Vermeulen, Labour force participation of the elderly in Europe: The importance of being healthy, 2005.
20. Kuznets Simon, Economic growth and income inequality. *The American economic review*, 45.1, 1955.
21. Lakner Christoph and Branko Milanovic, Global income distribution: from the fall of the Berlin Wall to the Great Recession. *The World Bank Economic Review*, 30.2, 2016.
22. Mackenbach Johan P., Willem J. Meerding and Anton E. Kunst, Economic costs of health inequalities in the European Union. *Journal of Epidemiology & Community Health*, 65.5, 2011.
23. Martinez-Vazquez, Moreno-Dodson, Vulovic, The impact of Tax and expenditure policies on Income distribution: Evidence from a large panel of countries, International Center for Public Policy, April, 2012.

24. Organisation for Economic Co-operation and Development (OECD). Education at a glance 2010: OECD indicators. Paris: OECD, 2011.
25. Piacentini, Mario and Chiara Monticone, Equations and Inequalities: Making Mathematics Accessible to All. PISA. OECD Publishing. 2, rue Andre Pascal, F-75775 Paris Cedex 16, France, 2016.
26. Woo, Bova, Kinda, Zhang, Distribution consequences of fiscal consolidation and the role of fiscal policy: What do the data say? IMF Working Paper, September, 2013.

### ԳԱՅՆԵ ԱՎԱԳՅԱՆ

*Доцент кафедры макроэкономики АГЭУ,  
кандидат экономических наук*

### ԱԼԻԿ ԹՐՕՏՅԱՆ

*Магистрант образовательной программы АГЭУ  
«Макроэкономический анализ»*

#### ***Влияние налогово-бюджетной политики на неравенство доходов населения в Республике Армения.*** – Неравенство

доходов характерно для всех экономических систем. Рыночный механизм перераспределения доходов и даже их централизованное регулирование не может устранить это неравенство, поскольку равное распределение доходов не только не ведет к социальной справедливости, но и ослабляет стимулы к труду и стремление к обеспечению высокой производительности труда. Более того, различия в способностях, образовании и подготовке, профессиональном вкусе, риске, владении имуществом являются существенными факторами возникновения неравенства доходов в обществе.

В статье анализируется влияние налогово-бюджетной политики на преодоление неравенства доходов. С этой целью сначала были прокомментированы исследования, проведенные в этом направлении разными экономистами, затем изучено нынешнее состояние неравенства доходов в Армении, изменения фискальной политики за последнее десятилетие. Разработана модель, позволяющая оценить влияние фискальной политики на неравенство доходов, сделаны прогнозы на дальнейшую динамику использования отдельных инструментов фискальной политики, их влияние на неравенство доходов на ближайшие пять лет.

**Ключевые слова:** *неравенство доходов, бедность, налоги, бюджет, фискальная политика*

JEL: P46, O23

DOI: 10.52174/1829-0280\_2022.2-9

**GAYANE AVAGYAN**

*Associate Professor of the Chair  
of Macroeconomics of ASUE, PhD in Economics*

**ALIK TOROSYAN**

*MA Student of ASUE Educational Program «Macroeconomic Analysis»*

***Impact of Fiscal Policy on Income Inequality in the Republic of Armenia.*** – Income inequality is characteristic of all economic systems. The market mechanism of income redistribution, and even their centralized regulation, can not eliminate this inequality, because equal distribution of income does not only lead to social justice, but also weakens incentives to work and the desire to ensure high productivity. Moreover, differences in ability, education and training, professional taste and risk, ownership of property are significant factors in the emergence of income inequality in society. The paper analyzes the impact of fiscal policy on overcoming income inequality. For this purpose, first researches done by different economists in this field were commented, then the current state of income inequality in Armenia, the changes of the fiscal policy during the last decade were studied. A model has been developed to assess the impact of fiscal policy on income inequality, the future course of certain fiscal policy instruments, their impact on income inequality for the next five years.

**Keywords:** *income inequality, poverty, taxes, budget, fiscal policy*

JEL: P46, 023

DOI: 10.52174/1829-0280\_2022.2-9